



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

- ԱՂՕԹՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 22ՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կիրակի, 5 Դեկտեմբերին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

Երեքշաբթի, 7 Դեկտեմբերը, Հայաստանի աղետալի երկրաշարժի 22-րդ տարելիցն է:

Այս առիթով Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, Կիրակի, 5 Դեկտեմբերին, Ս. Պատարագի ընթացքին, «Տեր Ողորմեա»ի աղօթք պիտի բարձրացուի ի յիշատակ գոհերուն:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները խումներամ ուղղուելու իրենց շրջանի եկեղեցիները, եւ աղօթքով խոնարհելու երկրաշարժի գոհերուն յիշատակին առջեւ, խնդրելու Աստուծմէ, որ մեր Հայրենիքը նմանօրինակ աղետներէ հեռու պահէ եւ մեր ժողովուրդի զաւակներուն պարգեւէ խաղաղ ու ապահով կեանք:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL

- PRAYERS ON THE 22ND ANNIVERSARY OF THE ARMENIA EARTHQUAKE

On Sunday, December 5th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

Given that Tuesday, December 7th, is the 22nd anniversary of the earthquake in Armenia, by the ordinance of the Prelate on Sunday, December 5th, *Der Voghormya* prayers will be offered in all Prelacy Churches for the souls of the victims.

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԶՆՆԱՐԿԵՑ ԹԵՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ



Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը Երեքշաբթի, 30 Նոյեմբերի երեկոյեան, յատուկ նիստ մը գումարեց Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, զեկուցում

մը լսելու համար Ազգային Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող աշխատանքներուն մասին եւ քննարկելու անմիջական հարցեր ու աշխատանքի յաւելեալ բարելաւման միջոցներ:

Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան անդամներ, Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամներուն մեծ մասը եւ եկեղեցիներու հոգաբարձութեանց ատենապետներն ու ներկայացուցիչները: Ներկայ էին նաեւ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչները:

Նիստին բացումը տեղի ունեցաւ ժամը 7:30ին, Առաջնորդ Սրբազանին աղօթքով: Իր բացման խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը յիշեցում կատարեց, որ այս նիստը տեղի կ'ունենայ Ազգ. Երեսփոխանական ժողովի թելադրանքով, ծանօթանալու համար Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան անցեալ 6 ամիսներու աշխատանքներուն ընթացքին ու արդիւնքին, ինչպէս նաեւ խորհրդակցութիւն ունենալու կարգ մը անմիջական հարցերու մասին: Ան վեր առաւ երեսփոխաններուն դերն ու առաքելութիւնը, իբրեւ լծակիցներ Ազգ. Վարչութեան ու ծխական շրջաններու հոգաբարձութեանց: Ապա, ան հրաւիրեց Ազգ. Վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Ռիմա Պօղոսեանը, որպէսզի վարէ ժողովը:

Տիկին Ռ. Պօղոսեան եւս ողջունեց հրաւիրեալներուն ներկայութիւնը, յոյս յայտնելով, որ խորհրդակցութիւնները պիտի ըլլան շինիչ ու արդիւնաւոր: Ան հրաւիրեց Տիար Խաժակ Տիքիճեանը, որպէսզի արտասանէ իր խօսքը:

Տիար Տիքիճեան եւս վեր առաւ երեսփոխանական ժողովի անդամներուն դերը՝ Ազգ. Առաջնորդարանի թէ ծխական շրջաններու աշխատանքներուն բարելաւման դիտանկիւնէն, նշելով, որ երեսփոխաններ սերտօրէն կը գործակցին հոգաբարձութեանց հետ, մանաւանդ, որ շրջաններուն ծաղկումն ու բարելաւումը կը կարօտին բոլորին միացեալ աշխատանքներուն:

Նկատի ունենալով, որ սոյն նիստը առաջինն էր Ազգ. երեսփոխանական ժողովի 38րդ նստաշրջանէն ասդին (գումարուած՝ անցեալ Մայիսի կիսուն), Տիկին Ռ. Պօղոսեան ժողովականներուն ծանօթացուց Ազգ. Վարչութեան կազմն ու դիւանին անդամները: Այնուհետեւ, ժողովին հակիրճ զեկուցումներ ներկայացուեցան Առաջնորդ Սրբազանին, Կրօնական ժողովին ու Ազգ. Վարչութեան բարոյական ու նիւթական գործունեութեան մասին: Տեղեկագիրները կ'ընդգրկէին նաեւ Ազգ. Վարժարաններու խնամակալ Մարմինին աշխատանքներուն զեկուցումը:



Մեկնելով ներկայացուցած տեղեկութիւններէն, ներկաները ուղղեցին լուսաբանական հարցումներ, որոնց հանգամանօրէն պատասխանեցին Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութեան ու խնամակալ Մարմինի անդամներ: Խորհրդակցութիւնը ընդգրկեց տնտեսական ընդհանուր տագնապին հետեւանքները՝ ծխական շրջաններու եւ Ազգային Վարժարաններու կացութեան վրայ, ինչպէս

նաեւ դժուարին հանգրուանը յաւելեալ ճիգերով ու սերտ գործակցութեամբ շրջանցելու միջոցները: Շեշտուեցաւ նաեւ մեր վարժարաններուն մէջ կրօնական դաստիարակութիւնն ու հայեցի կրթութիւնը աւելի եւս բարելաւելու անհրաժեշտութիւնը:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանը ներկաներուն ուշադրութիւնը հրաւիրեց կարգ մը ծրագիրներու եւ առաջադրանքներու վրայ: Այս ծիրին մէջ, ան յիշեցուց, որ Ազգ. Առաջնորդարանին մօտ կը գտնուին Ս. Աթոռոյս կողմէ հրատարակուած՝ հնաւանդ «Նարեկ» մատեանի մէկ գեղատիպ հրատարակութենէն օրինակներ, որոնք տրամադրելի են հաւատացեալներուն: Ան նաեւ յոյս յայտնեց, թէ աւելի քան ամիս մը ետք, Ս. Ծննդեան աւանդական ընթրիքին օրը, ժողովականներն ու ազգայիններ տօնական մթնոլորտի մէջ վերագտնեն գիրար:

Տիկին Ռ. Պօղոսեան շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, իրենց ներկայութեան ու քննարկումներուն մասնակցութեան համար:

Ժողովը վերջ գտաւ ժամը 9ին, Առաջնորդ Սրբազանին աղօթքով ու «Կիլիկիա» երգով:

SPECIAL SESSION OF THE REPRESENTATIVES ASSEMBLY HELD AT THE PRELACY

On Tuesday, November 30th, 2010, a special session of the Representatives Assembly convened at the Prelacy "Dikran and Zarouhie Der

Ghazarian" Hall presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

In attendance were Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Delegates, Boards of Trustees Chairmen and representatives, and members of the Board of Regents.

The assembly began with the invocation by the Prelate. In his remarks, the Prelate noted that the session was called to assess the activities of the Prelacy and its parishes in the last six months since the 38th Representatives Assembly which was held in May, and to hear proposals and recommendations for the future. He then invited Executive Council Chair Mrs. Rima Boghossian to head the meeting.

Mrs. Boghossian expressed her wish for the meeting to proceed smoothly and for a fruitful outcome. She then invited Mr. Dikijian to address the assembly.

Mr. Dikijian spoke of the important role delegates play in the advancement of our churches, in collaboration with the Board of Trustees of their respective parishes.

Given that it was the first meeting of the delegates since May, Mrs. Boghossian first introduced the Executive Council, which was elected at the 38th Assembly. The six month activity reports of the Prelate, Religious and Executive Councils, and Board of Regents were then presented, as well as the financial report.

A question and answer session followed, along with discussions on a number of topics and primarily on financial difficulties of our churches and schools resulting from the global economic crisis. Special emphasis was given to strengthening religious and Armenian education in Prelacy Schools.

In conclusion, the Prelate brought to the delegates' attention a few upcoming events and planned projects. He reminded them of the limited edition illustrated Nareg prayer book published by the Catholicosate of Cilicia, which is available for purchase, and of the upcoming New Year and Christmas Dinner.

Mrs. Boghossian thanked the attendees for their participation, and the meeting came to a close with the Prelate's benediction and the singing of the Cilician anthem.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ԱՆԴԱՄ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**



Ուրբաթ, 3 Դեկտեմբերի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Իրանի խորհրդարանի հայ անդամներէն Տիար Գեորգ Վարդանեանի այցելութիւնը: Հանդիպումին ներկայ եղան Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան եւ անդամ Տիար Կարէն Բենիասեանս:

Հիւր երեսփոխանը Լոս Անճելըս կը գտնուի, մասնակցութիւն բերելու համար Հ. Յ. Դաշնակցութեան 120ամեակին նուիրուած հրապարակային ձեռնարկներու: Ան գոհունակութիւն յայտնեց, որ առիթը կ'ունենայ անգամ մը եւս ըլլալու Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ:

Հանդիպումը առիթ եղաւ տեղեկութիւններու փոխանակման: Հիւր խորհրդարանականը ընդհանուր տեղեկութիւններ հաղորդեց Իրանի մեր գաղութին հասարակական կեանքին ու իրագործումներուն մասին: Առաջնորդ Սրբազանն ու հիւրընկալ վարչականները, իրենց կարգին, որոշ տեղեկութիւններ տուին Արեւմտեան մեր Թեմի աշխատանքի դաշտերուն ու անմիջական ծրագիրներու մասին:

Հանդիպումէն ետք, Առաջնորդ Սրբազանը ներկաները հիւրասիրեց ճաշով:

PRELATE WELCOMES ARMENIAN MEMBER OF IRAN'S PARLIAMENT GEVORG VARTANIAN



On Friday, December 3rd, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy member of Iran's Parliament Mr. Gevorg Vartanian. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and member Mr. Kahren Beniasians participated in the meeting.

Mr. Vartanian

expressed joy for the opportunity to visit the Prelacy once again. He is currently in Los Angeles to participate in the 120th anniversary celebrations of the ARF.

During their meeting, the Prelate and guest exchanged information about the state and endeavors of the Western Prelacy and the Iranian-Armenian community respectively.

At the conclusion of the meeting, the Prelate hosted Mr. Vartanian to lunch.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇՎԿԵՐՏՆԵՐՈՒ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Ուրբաթ, 3
Դեկտեմբերի առաւօտուն,
Միիթարեան Հայրերու
Վարժարանի վերին կարգի
աշակերտները,
առաջնորդութեամբ
վարժարանի տնօրէն Տիար
Յովհաննէս Խոստեղեանի
եւ դաստիարակներուն,
այցելեցին Ազգային
Առաջնորդարան եւ
դիմաւորուեցան Թեմիս
բարեջան Առաջնորդ
Բարձր. Տ. Մուշեղ Արք.

Մարտիրոսեանի կողմէ: Առաջնորդ Սրբազանին կողքին էին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Առաջին հերթին, աշակերտները Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ աղօթքի պահ մը ունեցան. «Առաւօտ Լուսոյ» եւ այլ շարականներու երգեցողութենէն ետք, աշակերտները եւ ուսուցիչները համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր խօսք առին վարժարանի տնօրէնը, Հայր Պարթեւ եւ Առաջնորդ Սրբազանը, իսկ վարժարանի աշակերտները ներկայացուցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Վարժարանին տնօրէնը՝ Պրն. Յովհաննէս Խոստեղեան, Առաջնորդ Սրբազանին ներկայացուց աշակերտները, նշելով, որ Ս. Ծննդեան տօսի նախօրեակին, Ազգ. Առաջնորդարան եկած են իբրեւ ուխտաւորներ, փոխանցելու բարեմաղթութիւններ: Ան նշեց, թէ աշակերտները մաս կը կազմեն հայութեան նոր սերունդին, որ ժառանգորդն է մեր պատմութեան, մշակոյթին ու պատմութիւն կերտած հայրերէրուն՝ Մեսրոպ Մաշտոցի ու Վարդան Մամիկոնեանի, որոնք ճգնեցան ու պայքարեցան ի խնդիր

հայրենիքին ու հայութեան պահպանման: Ան հաւաստեց, որ այս պատանիները պատրաստ են շարունակելու մեր հայրերէն ավանդ թողուած երթը, առաջնորդ ունենալով մեր հերոսներուն ու պատմութիւն կերտողներուն օրինակը: Ան խնդրեց, որ Առաջնորդ Սրբազանը իր օրհնութիւնը շնորհէ աշակերտներուն:

Աշակերտները երգեցին «Կիլիկիա»ն ու Հայրապետական մաղթանքը: Հայր Պարթեւ սեղմ կերպով բացատրութիւն տուաւ Ազգ. Առաջնորդարանի աշխատանքներուն, առաքելութեան, մատրան ու առհասարակ հայութեան քրիստոնէական յատկանիշներուն մասին:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը իր պատգամը ուղղեց աշակերտներուն. ան ողջունեց դաստիարակներն ու աշակերտները, դրուատեց անոնց գեղեցիկ երգեցողութիւնն ու վստահութիւն յայտնեց, որ անոնք դպրոցին մէջ կը ծանօթանան մեր պատմութեան ու ազգային ավանդներուն: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Մխիթարեան Հայրերուն ազնիւ դերակատարութիւնը՝ մեր մշակոյթին ու հաւատքին պահպանման մէջ, ապա նաեւ խօսեցաւ հայութեան քրիստոնէութեան դարձին բերած բարիքներուն եւ հաւատարիմ քրիստոնէայ հայեր ըլլալու հրամայականին մասին: Ան մաղթեց, որ Ազգ. Առաջնորդարան այս այցելութիւնը բարի յիշատակներ արձանագրէ աշակերտներուն սիրտերուն մէջ, եւ անոնք ըլլան հայութեան երթը շարունակող արժանաւորներ:

Առաջնորդ Սրբազանին փափաքով, աշակերտներն ու դաստիարակները բարձրացան Ազգ. Առաջնորդարանի դահլիճը, ուր տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում: Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն բացատրեց, թէ դահլիճը Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական հիւրասրահն է, ուր կը դիմաւորուին նաեւ պետական ու պաշտօնական անձնաւորութիւններ: Ան մաղթեց, որ աշակերտները եւս ապագային դառնան ականաւոր հայորդիներ ու արժանի ժառանգորդները ըլլան մեր այժմու ծառայողներուն:

Առաջնորդ Սրբազանը նաեւ աշակերտներուն բացատրութիւններ տուաւ այն թանկարժէք իրերուն մասին, որոնք կը պահուին դահլիճին մօտակայ ապակեդարանին մէջ. հոն գետեղուած են հայրենիքէն բերուած մասունքներ, ինչպէս նաեւ Տեղասպանութեան շրջանին փրկուած արուեստի գործեր:

Հրաժեշտէն առաջ, Առաջնորդ Սրբազանը Տնօրէնին ու դաստիարակներուն յանձնեց յուշանուէրներ, իսկ աշակերտներուն յանձնուեցան Ս. Ծննդեան տօնը խորհրդանշող պատկերներ: Աշակերտները նաեւ ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի տարբեր բաժանմունքներուն, եւ գեղեցիկ յիշատակներով վերադարձան դպրոց:

MEKHITARIST FATHERS' SCHOOL STUDENTS VISIT THE PRELACY

On the morning of Friday, December 3rd, students from the Mekhitarist Fathers' Armenian School visited the Prelacy, accompanied by Principal Mr. Hovannes Khosdeghian and teachers.

Upon their arrival, the students were greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.



The students were led to the "St. Dertad and St. Ashkhen" Chapel where they participated in morning prayers.

The students later headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where a program took place. Remarks were delivered by the Prelate, Fr. Barthev, and the school principal, and the students presented a cultural

program.

Principal Khosdeghian introduced the students and noted that they had come to the Prelacy to exchange good tidings and well wishes as we approach the Christmas season. He noted that as the heirs of our forefathers St. Mesrob Mashdots and Vartan Mamigonian who dedicated their lives to the defense and advancement of our nation and heritage, the students are ready to continue their legacy and dedicate themselves to the progress of our nation. In conclusion, he asked for the Prelate to bless the students.

The students sang the Cilician and Pontifical anthems, after which Fr. Barthev briefly explained to them the endeavors and mission of the Prelacy.

The Prelate welcomed the students and administrators, and commended them for their performance. He lauded the contributions of the Mekhitarist Fathers in the fostering of our faith and culture and also spoke of the virtues of our Christian faith and the importance of living our lives as faithful Christians.

The Prelate then invited the students to the reception room where a discussion took place, after which they headed to the lobby to view the display of antiques brought from Armenia and some of which were rescued during the Genocide.

At the conclusion of the visit, the Prelate presented the Principal, teachers, and students with mementos.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Կիրակի, 5 Դեկտեմբերի երեկոյեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 120-ամեակի ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Beverly Hilton պանդոկին մէջ, Beverly Hills: Ձեռնարկը կազմակերպուած է Հայ Մշակութային Հիմնարկութեան կողմէ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի կատարէ բացման աղօթքը: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչներ:

PRELATE TO OFFER THE INVOCATION AT THE ACF ANNUAL BANQUET

On Sunday, December 5th, the 120th anniversary of the ARF will be celebrated with a banquet organized by the ACF at the Beverly Hilton.

The Prelate will deliver the invocation.

Executive Council members will also be in attendance.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԱՍՏԻ ՏՇՈՒՄ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐԽԻՆՆԵՐՈՒՆ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԶԵՌՆԱՐԿԻՆ



Նախաձեռնութեամբ
Armenian Film Founda-
tion-ին եւ USC Համալսարանի
Shoah Հիմնարկին,
Հինգշաբթի, 2
Դեկտեմբերին,
համալսարանին մէջ տեղի
ունեցաւ յատուկ
ընդունելութիւն-հանդիպում
մը, հրաւիրեալներուն
ծանօթութիւն տալու համար
ցեղասպանական
արարքներէ
վերապրողներու

վերաբերող արխիւներու մասին:

Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ սոյն նախաձեռնութեան: Անոր կ'ընկերանար Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զիւլ. Գամպուրեան:

Shoahի կողմէ ներկայացում մը կատարեց Սթեֆըն Սմիթ, իսկ Armenian Film Foundation-էն ներկայ էին Տոքթ. Մայքըլ Յակոբեան եւ Ճերի Վարդանեան:

Հրաւիրեալները շրջապտոյտ մը կատարեցին Shoahի մասնագիտական բաժանմունքներուն մէջ, ուր արձանագրուած են Ռոջակիզումէն փրկուածներու վկայութիւնները եւ այժմ, այդ բոլորը թուային (digital) դրութեամբ կ'արձանագրուին, ի հարկին համացանցի վրայ դրուելու համար:

Հաղորդուեցաւ, որ Armenian Film Foundation-ը եւս ձեռնարկած է նմանօրինակ աշխատանքի, գործակցութեամբ Shoah-ի. հիմնարկութեան շուրջ 400ի հասնող արխիւներն ալ պիտի արձանագրուին թուային դրութեամբ:

Ծանօթացման շրջապտոյտէն ետք, հրաւիրեալները ճաշի հիւրը եղան կազմակերպիչներուն:

Խորհրդակցութեան նիւթ դարձան նման նախաձեռնութեան մը օգտակարութիւնը, աշակերտներու եւ ուսանողներու կողմէ օգտագործման միջոցներն ու պիւտճեական կարիքները ապահովելու կարելիութիւնները:

Առաջնորդ Սրբազանը գնահատանք արձանագրեց այս աշխատանքին համար եւ յոյս յայտնեց, որ ծրագիրը յաջողութեամբ պսակուի:

PRELATE ATTENDS TOUR OF THE USC SHOAH FOUNDATION

By the invitation of the Armenian Film Foundation (AFF), on Thursday, December 2nd, the Prelate attended a tour of the USC Shoah Foundation, which is working with the AFF to archive nearly 400 testimonies of Armenian Genocide survivors and witnesses. The tour was conducted by the senior leadership of the Shoah Foundation.

The Prelate was accompanied by Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian.

The Shoah Foundation's Visual History Archive contains nearly 52,000 video testimonies of Holocaust survivors. Earlier this year, the AFF signed a historic agreement with the Shoah Foundation to archive testimonies of Armenian Genocide survivors.

During the tour, the Prelate and attendees saw how the archives are maintained and how they will be made available worldwide.

A luncheon followed.

In his remarks, the Prelate commended the collaborative efforts of the Shoah Foundation and the AFF, and wished for the successful realization of the project.
